թեղթափին, որ Թումայ առաքեալն մասն ի մէջն կայ» և «Վասլոյ ս՞ր նշանին որ թգ՞ր կոչի»։ ԺԱՄԱՆԱԿ. ԺԷ —ԺԸ. դարու առաջին քառորդ։

139. 140. 141. 142. Մատ. Ս. էջմ. № 662/750 (Կ. 648). Լուծմունք Ս. Գրոց ի Վարդանայ, թուղթ, 12,2×8 սմ., թերթ 233. ԳԻՐ. բոլորգիր։ ԳՐԻՉ. Սարգիս, որի ծնողն է «Վռիթայ»։ Օրինակի տէրը եղել է «Պ՞ր Կոստ(ա)նց որդի Թորոս Պրիամբծիւն»։ ԺԱՄԱՆԱԿ. Անթուական, բայց հաւանօրէն ԺԳ. դարու վերջը ԺԴ. սկիզբը։ Նկարուած են 126ա—129ա. «Նշանագիրք Անուանց կարճաբանութի՞» վերնագրով հատուածը, իբրև ՍՂԱԳՐՈՒԹԵԱՆ և ՆՇԱՆԱԳՐԵՐԻ խառը բառարան։ ա) 126ա. բ) 126բ—127ա, գ) 127բ—128ա. դ) 128բ—129ա.։ Առաջինը բնագրի մեծութեամբ, միւսները չնչին տարբերութեամբ փոքր բնագրից։

143. Մատ. Ս. էջմ. Գ. № 91/3177. Խառը բովանդակութեամբ. թուղթ, 15×11½ սմ. նոտրագիր, անյայտ գրչի և ժամանակի գործ. գուցէ ԺԸ. դարու սկզբի գործ։ Առաջին չորս թերթերի վերայ ՆՇԱՆԱԳՐԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ, որից միայն մի երես իբրև նմուշ ենք տալիս։

Նկարուած է 1բ—2ա։ Առաջին տող երկու երեսում՝ մէջ տեղի լուսանցքների հետ 16 սմ.×11½ երեսների երկարութիւնը։ Մեր նկարը. 14×9,7 սմ.։